

**ՀԱՅԵՐԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՄԵՐԶԲԱԼԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

XIV դարում սկիզբ առած լեհահայ գաղութի պատմությունն անջնջելի հետք է թողել ինչպես հայ ժողովրդի ու Հայաստանի, այնպես էլ հյուրընկալ երկրի պատմության ու մշակութային ժառանգության մեջ: Ավելի քան 650-ամյա գոյության ընթացքում լեհահայ համայնքը գտնվել է տարբեր հասարակական-պատմական, սոցիալ-տնտեսական, ազգային ու կրոնական պայմաններում, ինչն օրինաչափորեն ուժեղ ու տևական ներգործություն է ունեցել հայության կյանքի վրա, ապա հանգեցրել ազգային դիմագծի աստիճանական կորստին:

Նորագույն պատմական ժամանակաշրջանում, երբ վերականգնվել էր Լեհաստանի անկախությունը (1918 թ.) լեհահայ համայնքն ազգային-մշակութային վերելք է ապրել, հիմնվել են լեհահայ ընկերություններ, բացվել է լեհահայոց պատմության թանգարան (Լվովի Մայր տաճարին կից), հրատարակվել են ամսագրեր: Երկրորդ աշխարհամարտի ընթացքում և դրան հաջորդող տարիներին Լեհաստանն անցավ մեծ փորձությունների միջով, իսկ լեհահայ համայնքը զգալիորեն նոսրացավ, բռնությունների ենթարկվեցին Ուկրիանական ԽՍՀ-ին անցած տարածքներում, մասամբ էլ արտագաղթեց արևմուտք՝ լեհական

Միլեզիա: Համայնքի ներսում նոր թափ հավաքեց ուժացումը, բացակայում էին դպրոցներն ու հայեցի միջավայրը:

Բայցևայնպես, Լեհաստանում հետպատերազմյան տարիներին ստեղծվել են կաթուղիկ հայ հավատացյալներին միավորող և փաստացիորեն լեհահայությանը համախմբող երկու եկեղեցական թեմեր՝ Հյուսիսային թեմը Գդանսկ կենտրոնով (1950-ական թթ.) և Հարավային թեմը՝ Գլիվիցի կենտրոնով (1980-ական թթ.):

Արդեն 1958 թվականին Լեհաստանի լեհահայ կաթուղիկների Հյուսիսային թեմի հայ հավատացյալների ջանքերով (Կազեմիր Ֆիլիպիակ-Ստանիսլավի նախկին հոգևորական) նրանց է տրվել Գդանսկի Սբ. Պողոս-Պետրոս առաքյալների եկեղեցին, որը նորոգվել է և ծառայել լեհահայերի հոգևոր կարիքներին: 1976 թ. հիշյալ եկեղեցին ետ է վերցվել և հայերի տնօրինության տակ է մնացել եկեղեցուն կից Ս. Մարիայի մատուռը:

Հարավային Լեհաստանում հայերին համախմբող կենտրոն է դարձել Գլիվիցիի Սբ. Երրորդություն հայ կաթուղիկ եկեղեցին (հատկացվել է 1945 թ.), իսկ 1975 թ. Կրակովի հայերին է տրամադրվել դոմինիկյան Ս. Իդաեի եկեղեցուն կից մատուռը: Հարավային թեմի առաջին թեմական էր Կրակովի հայտնի յազելլոնյան համալսարանում հայերեն դասավանդող Կազիմեժ քին. Ռոշքոն:

Այդուհանդերձ, շուրջ 30 տարի լեհահայերը հիմնականում ինտեգրվեցին լեհական հասարակության մեջ և ազգային զարթոնք ապրեցին միայն 1980-ական թթ.: Այս շրջանում լեհահայ համայնքն ուներ շուրջ 15 հազար անդամ, որոնք հիմնականում հնաբնակ լեհահայերն էին, հետպատերազմյան

շրջանի վերաբնակիչները, ինչպես նաև խառնամուսնություններից ծնվածները:

1980-ական թթ. Լեհաստանի տարբեր քաղաքներում հիմնվել են Հայ մշակույթի համակիրների ընկերություններ (խմբակներ): Առաջին ընկերությունը հիմնադրվել է Կրակովում (1980 թ.), որի նախագահն էր պատմաբան, իրավաբան ու թարգմանիչ Միխայ Բոհուսևիչը (Բոդոսևիչ), իսկ քարտուղարը՝ Թերեզա Պասսակա-սը:

Հիմնադրման գործում մեծ էր Կրակովի Ազգագրական թանգարանի համակարգող դոկտոր Յանուշ Կամոցկու, մագիստրոս Ալեքսանդրա Յախեր-Տիշկովայի և Լեհաստանի ազգաճանաչության ընկերակցության ղեկավար դոկտոր Աննա Կովալսկա-Լևիցկու և այլոց բազմակողմանի օգնությունն ու աջակցությունը:

Նույնանուն ընկերություններ են հիմնվել Վարշավայում (1980 թ. դեկտ. – 1981 թ.) և Գդանսկում (1984 թ., հիմնադիր Մարիա Աբգարովիչ), որոնց նպատակն էր համախմբել լեհահայերին, ներկայացնել գաղութի և Հայաստանի պատմությունն ու մշակույթը: Կրակովում 1980 թ. և 1983 թ. գումարվել են երկու գիտական նստաշրջաններ, 1980–1982 թթ. կազմակերպվել են հայերեն լեզվի դասընթացներ:

Փաստացիորեն արդեն մի քանի ամիս անց Հայ մշակույթի համակիրների խմբակը Կրակովում կազմակերպել է Լեհահայերի առաջին համաժողովը և գիտական նստաշրջանը: 1980 թվականի նոյեմբերի 8–9-ի կրակովյան PAX-ի պատերից ներս և հայր դամինիկյանների տաճարում հանդիպել են լեհահայերի

մոտ 500 ներկայացուցիչներ, որոնք ժամանել էին Լեհաստանի ողջ տարածքից¹:

Իր ակտիվ ու բեղուն գործունեությամբ հատկապես նշանակալի աշխատանք է ծավալել Վարշավայի ընկերությունը, որը 1990-ական թթ. ուներ հարյուրավոր համակիրներ ու անդամներ: Այս ընկերության հիմնադիրն ու ավելի քան քսանամյա խնամակալը Վարշավայի համալսարանի դասախոս Լևոն Տեր-Օհանյանն էր: Ընկերության ջանքերով լեհերենով հրատարակվել են ավելի քան երեսուն գրքույկներ, այդ թվում՝ Ջրիգնս Կոչյովի «*Լեհահայ երաժշտության ակնարկներ*», Յուլիուշ Գլոդեկի «*Արցախ*», Կատաժինա Ռաչկովսկու և Լևոն Տեր-Օհանյանի «*Մատենագրություն. Հայերը Լեհաստանում*» և այլն:

Լեհահայ Ադամ Տերլեցկու կողմից 1985 թ. հիմնադրված Կրակովի «Հայ մշակութային ընկերությունը» հրատարակել է *Տեղեկագիր*, որում ներկայացվել են ինչպես լեհահայ գաղութի, այնպես էլ Հայաստանի պատմությունը, մշակույթը, վեր են հանվել նրանց շուրջ առկա հիմնահարցերը:

Լեհահայերը գործուն աջակցություն են ցուցաբերել Սպիտակի 1988 թ. դեկտեմբերյան աղետալի երկրաշարժի և Ադրբեջանից փախստական հարյուրավոր կարիքավորներին, կազմակերպել են ամառային ճամբար Ադետի գոտու հայ երեխաների համար:

Այս նույն շրջանում Լեհաստանը թևակոխել էր վերափոխումների շրջան, դրվում էին Երրորդ հանրապետության հիմքերը: Երրորդ հանրապետության տարիներին էլ լեհահայ

¹ <http://www.awedis.ormianie.pl/>, Awedis-Աւետիս, Warszawa, Nr 25 - Zima 2015, էջ 1-5:

համայնքը կազմակերպական նոր որակ ստացավ, բազմակի անգամ համալրվեց Հայաստանից և հետխորհրդային այլ հանրապետություններից դեպի Լեհաստան եկած հազարավոր հայերով:

Անհրաժեշտություն առաջացավ հիմնել հայկական նոր կազմակերպություններ, քանի որ Կրակովի լեհական ազգագրական ընկերությունը կից ձևավորված հայ մշակութային ընկերությունները իրավական առումով սահմանափակ էին, չէին կարող լինել հայ համայնքի ներկայացուցչական մարմիններ: 1990 թ. սեպտեմբերին Կրակովում հիմնվում է Հայ մշակութային ընկերությունը, որն էլ 1991 թ. հունիսի 15-ին գումարում է լեհահայ համայնքի առաջին ազգային ժողով-հավաքը, 1993 թ. կազմակերպեց Բյուլլետենի հրատարակություն (խմբ.՝ Աննա Քշիշտոֆովիչ), սպագրեց 50-ից ավելի գրքեր ու բրոշյուրներ:

Հետագայում հիմնվեցին նաև Գլիվիցի «Արքեպիսկոպոս Թեոդորովիչի անվան Լեհահայերի ասոցացիան», իսկ Հայաստանից ներգաղթած հայերի կողմից կազմակերպվեցին լեհահայերի «Արարատ» ասոցացիան (Ararat Association of Armenians in Poland), «Լեհաստանի հայերի ասոցացիան» (Association of Armenians in Poland):

2005 թվականին մի խումբ լեհահայերի նվիրվածության և սրտացավության շնորհիվ հաջողվեց Պարադիժից Գոյանսկ և Վարշավա տեղափոխել լեհահայոց ժառանգությունը՝ հնագույն ձեռագրեր և արվեստի գործեր, որոնք հիմնականում պատկանել էին Ռեչպոսպոլիտայի Կրեսների հայկական եկեղեցիներին¹: Պետք է նշել, որ այդ ջանքերն ուղղված էին ոչ միայն հայ՝ այլև

¹ <http://www.awedis.ormianie.pl/>, Awedis-Աւետիս, Warszawa, Nr 27-Lato 2016, էջ 1-6:

համալեհական փոքրամասնության ժառանգությունը փրկելուն: Հայտնի չէ, թե ինչ կարող էր պատահել այդ գրքերի, հագուստների, նկարների, եկեղեցական պարագաների և այլ արժեքավոր իրերի հետ, եթե չլինեք այդ խմբի գործուն միջամտությունը: Բարեբախտաբար ոչ մի անվերականգնելի վնաս չարձանագրվեց, իսկ համատեղ գործադրված ջանքերը լեհահայերի համար ազդակ հանդիսացան համապատասխան կազմակերպություն ստեղծելու համար, որը կբքադվի լեհահայոց ժառանգությամբ և վտանգված մշակութային հուշարձաններով:

Այսպես, 2006 թ. ապրիլի 13-ին Վարշավայում հիմնվել է Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը, նախագահ՝ Էվա Աբգարովիչ (2006–2012 թթ.)¹:

¹ Stęś անս Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, Նորավանք ԳԿՀ, 2014, էջ 84-86: Եվրոպայում գործող հայագիտական հաստատությունների մեջ յուրահատուկ է Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամի (Fundacji Kultury i Dziedzictwa Ormian Polskich) գործունեությունը: Հիմնադրամը ստեղծվել է 2006թ. Հայ կաթողիկե թեմի նախկին առաջնորդ Յուզեֆ Գլենպի կողմից: Իրականացնում է աշխատանքներ Լեհաստանի հայերի պատմության վերաբերյալ փաստաթղթերի, վավերագրերի, լուսանկարների և ձեռագրերի հավաքման ու պահպանման ուղղությամբ: Վերը հիշատակված աշխատանքների արդյունքում հիմնադրամում ձևավորվել է հայագիտական մեծ արխիվ: Հիմնադրամն իր առջև խնդիր է դրել ուսումնասիրել հավաքված հայագիտական արխիվային նյութերը՝ ցույց տալով հայերի դերակատարությունը Լեհաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական-մշակութային կյանքում և պահպանել լեհահայերի ավանդույթները: Թվայնացնելով լեհահայերի՝ հիմնադրամի տրամադրության տակ գտնվող ժառանգությունը՝ փորձ է արվում տարածել հայկական մշակույթի մասին գիտելիքները Լեհաստանում և նրա սահմաններից դուրս: Ուշադրության կենտրոնում է պահում Լեհաստանի «հին» ու «նոր» համայնքների կյանքում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք արտացոլվում են սոցիալ-մշակութային ուղղվածություն ունեցող «Ավետիս» ամսագրում: Հիմնադրամը նաև աշխատանքներ է իրականացնում Լեհաստանի հայկական հուշարձանների վերա-

Լեհահայոց վերոհիշյալ ժառանգությունը Հայ կաթողիկե եկեղեցու սեփականությունն էր հանդիսանում, ուստի լեհահայերը խնդրանքով դիմել են Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ կարդինալ Գլենպին, որն ընդառաջել է այդ խնդրանքին: Այսպես, 2006 թ. «Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը» ստանձնեց լեհահայոց ժառանգության պահպանության պարտականությունը: Կարդինալ Կազիմեժ Նիչը դարձավ Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ և շարունակեց այդ գործը: Հիմնադրամի գլխավոր նպատակներն են առանձնահատուկ ուշադրությունը լեհահայոց ժառանգությանը, Ռեչպոսպոլիտայի Կրեսների մշակույթի և պատմության տարածումը՝ ուշադրություն դարձնելով լեհահայոց պատմությանը և մշակույթին: Պետք է շեշտել, որ Հիմնադրամը չի սահմանափակվել միայն գրքերի հավաքմամբ, վերականգնմամբ ու պահպանմամբ, այլև կազմակերպել է բազմաթիվ գիտաժողովներ

նորոգման և վերականգնման ուղղությամբ: Ուշագրավ է նաև, որ հիմնարկությունն իր աշխատանքի արդյունքները լավագույնս ներկայացնում է համացանցում՝ դրանք հասանելի դարձնելով գիտական և ընդհանրապես դրանցով հետաքրքրվող շրջանակների համար: Հիմնադրամի աշխատանքներից երևում է, որ այն կրթական գործառույթներ չի իրականացնում, հրատարակում է գիտական և գիտահանրամատչելի աշխատություններ, կազմակերպում կամ համակազմակերպում է գիտաժողովներ: Հիմնադրամից ի վեր ակտիվ համագործակցում է հայաստանյան գիտական օջախների (Մատենադարան, ԵՊՀ) և ՀՀ պետական կառույցների, արևմտյան հայկական համայնքների կազմակերպությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Բելգիայի անհատ հայագետների հետ: Հատկանշական է, որ հիմնադրամի գործունեությունը գտնվում է պետական հոգաձության ներքո: Դրա վկայությունն է այն, որ հաստատության կողմից իրականացվող 2013 թ. Ծրագրերը ֆինանսավորվել են Վարչարարության և թվայնացման, Մշակույթի և Ազգային ժառանգության նախարարությունների, ինչպես նաև Լեհաստանի Պատմության թանգարանի կողմից («Վաղվա հայրենասիրությունը» ծրագրի շրջանակում):

ու ցուցահանդեսներ, իրականացրել է բազմազան ծրագրեր և հրատարակություններ, այդ թվում *Աւետիս* թերթը (2009 թվականից, խմբ.՝ Արմեն Արտվիխ): Հասկանչական է, որ թերթի հրատարակությունը ոգևորիչ արձագանք է գտել նաև հայկական մյուս համայնքներում, մասնավորապես Ռուսաստանի հայերի շրջանում մեծ համբավ ունեցող համառուսաստանյան «*Երկրամաս*» պարբերականի ինֆորմացիոն կենտրոնի հաղորդագրությունում նշվում էր, որ այս թերթը դեռևս 1939 թ. իր գոյությունը դադարեցրած լեհահայերի վերջին գրավոր օրգանի՝ «*Գր. Լուսավորչի պատվիրակ*»-ի շարունակողն է, որը հրատարակվել էր Լվովում (մինչև Ուկրաինական ԽՍՀ մասկազմելը) և, փաստացիորեն, ազդարարում էր լեհահայոց վերածնունդը¹: Այնուհետև շարունակելով միտքը՝ «*Երկրամասը*»-ը մանրամասնում է, որ երկլեզու այս թերթը սոցիալ-մշակութային ուղղվածություն ունի, այն 70-ամյա բացակայությունից հետո ներկայացնելու է լեհահայ կյանքը, իր շուրջը համախմբելով լեհահայերի տարբեր հասարակական խմբերի, հնարավորություն ընձեռելով հաղթահարել լեզվական, մշակութային ու պատմական խոչընդոտներն ու արգելքները:

Լեհահայոց Մշակույթի և Ժառանգության հիմնադրամը ձեռնարկել է Լեհահայոց Վիրտուալ Արխիվի (ԼՎԱ) ծրագիրը²: Այն ժամանակակից թվային հիմք ունի, ուր պետք է բոլոր հետաքրքրվող անձանց մատչելի լինեն Վարշավայում գտնվող Լեհահայոց Մշակույթի և Ժառանգության հիմնադրամի բոլոր տիպի ժողովածուները: Դրանք ներառում են ձեռագրեր, հնատիպ

¹ http://yerkramas.do.am/news/avedis_avedis_gazeta_armjan_polshi/2009-11-15-12459

² <http://www.avedis.ormianie.pl/>, Awedis-Աւետիս, Warszawa, Nr 5-Zima 2010, էջ 1–5:

գրքեր, թերթեր և ամսագրեր, նկարներ, արխիվային լուսանկարներ, պաշտամունքի իրեր, անգամ ձայնագրություններ եւ ժապավեններ, որոնք կազմում են բանավոր պատմության արխիվ:

Հիմնադրամի տասնամյակի առիթով (2016 թ.) լույս է ընծայվել պատկերազարդ ժողովածու՝ «Լեհահայեր. Մշակույթ և ժառանգություն» վերնագրով:

Վերջին քառորդ դարում դեպի Լեհաստան հայերի արտահոսքը չի դադարել, շարունակվել է տարբեր տեմպերով: Տարբեր գնահատականներով այդ տարիներին Լեհաստան են տեղափոխվել մինչև 100 հզ մարդ, սակայն Լեհաստանում անցկացված պաշտոնական մարդահամարների տվյալները հայ էթնիկ փոքրամասնության վերաբերյալ արձանագրել են ցածր թվական ցուցանիշեր. այսպես, 2002 թ. մարդահամարով՝ 1082, 2011 թ.՝ 3000 հայ: Սա որոշ հեղինակներ բացատրում են այն հանգամանքով, որ հայ բնակչությունը հավանաբար արձանագրվում է որպես լեհեր, այլապես հայության թվաքանակը մի քանի տասնյակ անգամ ավելին է¹: Այսօր Լեհաստանում հստակ տարբերակելի են հայության երեք ենթախմբեր՝

- Հնարնակ և առավել ասիմիլացված հայեր, որոնք այլևս լեհական հանրույթի լիարժեք մասնիկն են, չեն ժխտում իրենց հայկական արմատները,

- Հայեր, որոնք Լեհաստան են գաղթել ժամանակակից Արևմտյան Ուկրաինայից կամ Կրեմլից,

¹<http://www.mirrorspectator.com/2011/09/08/treasures-of-armenian-culture-in-poland/>
George Bournoutian, Treasures of Armenian culture in Poland, The Armenian Mirror-Spectator, Watertown, September 8, 2011.

- Վերջին քառորդ դարում ՀՀ-ից և հետխորհրդային տարած-
քից այստեղ վերաբնակեցվածներ¹:

Լեհահայ համայնքում այս խմբերի առկայությունը չի խոչըն-
դոտում այդ հյուրընկալ երկրում ամուր կապերի ձևավորմանը,
ազգային մշակույթի ու պատմության նկատմամբ հոգատար
վերաբերմունքի դրսևորմանը:

Լեհաստանի հայ համայնքի 650-ամյակի միջոցառումների
շրջանակներում Լեհահայ համայնքի ներկայացուցիչները 2017 թ.
մարտի 29-ին հյուրընկալվել են Լեհաստանի նախագահի
նստավայր Բելվեդերում, ուր, դիմելով ներկաներին, Լեհաստանի
նախագահ Անջեյ Դուդան նշել է. «Հայ ժողովրդի պատմությունը
գրանցված է նաև Լեհաստանի, մեր ժողովրդի պատմության մեջ,
այն անբաժանելի կեպով կապված է մեր ժողովրդի պատմության
հետ: Հարյուրամյակների ընթացքում իրար խառնված մեր
արյունը Լեհաստանի մեծ ձեռքբերումն է: Հնարավոր չէ պատ-
կերացնել Լեհաստանի պատմությունը առանց դրանում, մեր
մշակույթում, մեր ավանդույթներում հայերի բազմադարյա
ներդրման: Հայերն իրենց ավանդույթով, իրենց մտավորակա-
նությամբ, իրենց արվեստով, մշակույթով ու հավատով միշտ
հյուրընկալվել են Լեհաստանում: Հայերի ներդրումն անգնահա-
տելի է մեր երկրի կյանքում, հասարակական կյանքի բոլոր
ուլորտներում: Նրանք մշտապես ներգրավված են եղել հա-
սարակական կյանքում, իրենց նոր հայրենիքի կյանքում՝ մշտա-
պես հիշելով Հայաստանի մասին: Այս հարյուրամյակներին

¹ Grzegorz Pelczyński, Armenians in Poland in the period of communism and in the
“Third Polish Republic”, Our Europe. Ethnography – Ethnology – Anthropology of
Culture, Vol. 1/2012, Poznań, 2012, pp. 45-54.

նայելով՝ ես որպես Լեհաստանի Հանրապետության Նախագահ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ձեզ այդ ներդրման համար»¹:

2017 թ. հոկտեմբերի 19-ին Լեհաստանի Սենատը (ՀՀ ԱԺ պատվիրակության ներկայությամբ) ընդունեց պատմական բանաձև, իրավական ակտ, որով աննախադեպ քայլ կատարեց՝ երախտիք հայտնելով լեհահայերին իրենց այդ երկրում 650-ամյա ներկայության և անփոխարինելի վաստակի համար: Այս խոստուն գնահատականները լիովին արտացոլում են լեհահայ համայնքի պատմական անցյալն ու ներկան:

Ներկայումս Լեհաստանում գործում են մի քանի հայկական դպրոցներ Գդանսկում (դասընթացներն ընթանում են թիվ 58 հիմնական դպրոցում), Կրակովում (դասընթացներն ընթանում են Վոյեվոդային հասարակական գրադարանում), Վարշավա-Պլոցկում (դասընթացներն անցկացվում են թիվ 210 միջնակարգ դպրոցում): Հայ առաքելական եկեղեցու լեհահայոց հոգևոր հովիվն է Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը, իսկ հայ կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչներն են Ցեզարե Աննուսևիչը (Հյուսիսային ժողովրդապետության հայ կաթողիկե ժողովրդապետ, նստավայրը՝ Գդանսկ), Ռաֆալ Կրավչիկը (Կենտրոնական ժողովրդապետության հայ կաթողիկե ժողովրդապետ, նստավայրը՝ Վարշավա), Տադեուշ Իսակովիչ-Ջալեսսկին (Հարավային ժողովրդա-պետության հայ կաթողիկե ժողովրդապետ, նստավայրը՝ Գլիվիցե): Լեհաստանի հանրապետության կառավարության ազգային ու էթնիկական փոքրամասնությունների

¹ <http://www.lragir.am/index/arm/0/society/view/150586>

համատեղ հանձնաժողովում հայ փոքրամասնության ներկայացուցիչն է Էդվարդ Միեր-Ենդժեյովիչը:

Մերձբալթյան հանրապետություններ: Մերձբալթյան հանրապետություններում բնակվող հայությանը¹ ավանդական, կազմակերպված համայնք չի կարելի համարել, ինչպիսիք են տարածաշրջանի գերմանական կամ ռուսական էթնիկ խմբերը: Հայերի մասին հիշատակությունների հանդիպում ենք դեռևս Լիտվական Մեծ իշխանության, Լեհ-լիտվական միացյալ պետության շրջանից: Մասնավորապես, լեհ-լիտվական միացյալ ուժերի կազմում հայկական երկու ջոկատներ մասնակցել են 1410 թ. նշանավոր Գրյունվալդի կամ Ժալգիրիսի ճակատամարտին: Համեմատաբար մեծ հոսքերով հայերը Մերձբալթիկայում սկսել են հաստատվել XX դ. երկրորդ կեսից, երբ այստեղ գործուղվեցին հիմնականում հայ զինվորականներն ու մասնագետները: Հատկանշական է, որ Սալիտակի երկրաշարժից հետո մոտ 5 հազար հայեր տեղափոխվել են Լատվիա, որոշ քանակությամբ նաև Լիտվա և Էստոնիա, այստեղ են հանգրվանել նաև հայ փախստականներ Ադրբեջանից ու Վրաստանից²:

1989 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով մերձբալթյան հանրապետություններում ընդհանուր թվով բնակվում էին 6.393 հայեր, որից՝ Լիտվական ԽՍՀ-ում՝ 1.655, Լատվիա-

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հատոր IV, Գիրք II: Նորագույն ժամանակաշրջան (1945–1991 թթ.), խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., Երևան, 2016, էջեր 259-262:

² Армяне в Прибалтике. История и современность, «Ноев Ковчег», Москва, № 22–23 (205–206) Декабрь 2012 года.

կան ԽՍՀ-ում՝ 3.069, Էստոնական ԽՍՀ-ում՝ 1.669 հայ¹: Մերձբալթյան հանրապետություններում 1980-ական թթ. վերջին 1990-ական թթ. սկզբին սկսեցին ձևավորվել հայկական ազգային-մշակութային կառույցներ:

1988 թ. Լիտվայում հիմնվել է «Գարուն» հայ մշակութային միությունը (նախագահ՝ Օ. Իսան), ապա նաև Լիտվա-Հայաստան ընկերությունը: 1989 թվականից Վիլնյուսում, հետագայում նաև Վիսագինասում և Կաունասում գործել են հայկական կիրակնօրյա դպրոցներ:

1988 թ. նոյեմբերին Լատվիայի հայության համընդհանուր համագումարում հիմնվել է հայ ազգային-մշակութային կազմակերպություն՝ Լատվիա-հայկական ընկերությունը (նախագահ՝ գիտության վաստակավոր գործիչ Ս. Գասպարյան, ապա՝ Ռ. Խարաջանյան, Ս. Վարդանյան, Ե. Հարությունյան, Հ. Համբաձումյան)², որի նախաձեռնությամբ 1989 թ. գործում էր Ռիգայի հայկական կիրակնօրյա դպրոցը (N 1 գիմնազիայում), հրատարակվում «Լույս» տեղեկատվական բյուլետենը:

Վերոնշյալ ընկերությունը հայկական մշակույթը Լատվիայի հայ համայնքի մեջ քարոզելու ու հասարակայնացնելու նպատակով տարիներ շարունակ կազմակերպել է գրական-երաժշտական երեկոներ, գեղարվեստական և բարեգործական ցուցահանդեսներ, որից ստացված հասույթը փոխանցել է հայկական հիմնադրամներին:

1989 թ. Յիռուլիշիում կառուցվել է առաջին հայկական հուշարձան-աղբյուրը, իսկ 1990 թ. Ռիգայում կանգնեցվել է քանդա-

¹Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում ըստ 1959–1989 թթ. մարդահամարների տվյալների, Սփյուռքագիտություն տարեգիրք, Երևան, 2013, էջ 53:

² avitas.ru/article.php?n=70&a=018 (Армяне в Латвии . От общества - к общине).

կագործ Ս. Մուրադյանի հուշարձան-խաչքարը նվիրված Հայոց մեծ եղեռնի 75-ամյակին: Հետխորհրդային տարիներին Լատվիայում հիմնվել են հայկական նոր կազմակերպություններ, որոնք զգալի աշխատանք են կատարել համայնքային կյանքի ակտիվացման գործում: Ռիգայի հայ համայնքը հիմնադրվել է 2001 թվականին Լատվիա-հայկական մշակութային ընկերության հիմքի վրա: Համայնքը անդամակցում է Լատվիայի ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների «Համագործակցություն» միությանը և պետությունից ֆինանսավորում ստանում¹:

Էստոնիայում 1987 թ. սկզբնապես հիմնվել է Տալլինի և Էստոնիայի հայերի միավորումը (նախագահ՝ Ա. Դավիդյանց), որի նախաձեռնությամբ Հասպսալու քաղաքի այն տան պատին, որտեղ բնակվել է հայ ժողովրդի բարեկամ, Էստոնուհի միսիոներ Աննա Հեդվիգ Բյուլը, փակցվել է հուշատախտակ: 1989 թ. հիմնվել է Տարտուի Խ. Աբովյանի անվան հայկական մշակութային ընկերությունը (նախագահ՝ Ռ. Գրիգորյան), որը հայոց պատմության և արդի հայկական խնդիրների լուսաբանման ուղղությամբ հայ համայնքի մեջ ծավալել է լայն գործունեություն: Հայկական կազմակերպությունների մասնաճյուղեր են գործել նաև Պայդեում և Վալգայում²:

1991 թ. Տալլինում կազմակերպվել է «Հայաստանի տուն» փառատունը, որի շրջանակներում իրականացվել են տարաբնույթ մշակութային միջոցառումներ: 1989–1991 թթ. Տալլինում հրատարակվել է տեղի Հայկական մշակութային ընկերության «Վահագն» ամսաթերթը: Հայկական այս ընկերություններին կից Տալլին և

¹ https://www.armenianow.com/hy/features/5785/baltic_yans_a_visit_with_the

² Տե՛ս u Всемирный армянский атлас, М., 2015, էջ 423:

Տարտու քաղաքներում բացվել են հայկական կիրակնօրյա դպրոցներ¹:

2000 թ. Էստոնիայում անցկացված մարդահամարով հանրապետության հայ բնակչության թվաքանակը կազմում էր 1444 հայ, իսկ Լիտվայում 2001թ.՝ 1477 հայ: Լատվիայի բնակչության ռեեստրի տվյալներով 2011 թ. դրությամբ հանրապետությունում արձանագրվել է 2700 հայ բնակիչ, որոնց 43%-ն ուներ քաղաքացիություն: Այլ տվյալներով այս երեք հանրապետություններում միասին բնակվում են շուրջ 10 հազար հայ:

2009 թ. հիմնվել է Բալթիայի հայկական կոնգրեսը, որը միավորում է երեք հանրապետությունների հայ համայնքները, իսկ 2013 թ. լույս է տեսնում նրանց «Կռունկ» հանդեսը: Այստեղ անկանոն պարբերականությամբ հրատարակվում են նաև այլ պարբերականներ, առկա են հեռուստառադիոժամեր, մշակութային ու մարզական կառույցներ:

Արդեն 1990-ական թթ. գրանցվել են հայ առաքելական եկեղեցու համայնքներ, բալթյան երկրների մայրաքաղաքներում գործում են եկեղեցիներ²: Վերջին շրջանում իր ակտիվությամբ աչքի է ընկնում Վիլնյուսում ՀՀ դեսպանությունը. որը տարատեսակ միջոցառումներով ակտիվացրել է հայ համայնքը: Մեծ Եղեռնի 100-ամյակին ընդառաջ Լիտվայում, որը ցեղասպանությունը ճանաչած միակ մերձբալթյան երկիրն է, հրավիրվել է ժողով հայ համայնքների (Վիլնյուս, Կաունաս, Կլայպեդա, Շյաուլյայ, Վիսագինաս) ներկայացուցիչների, Նոր Նախիջևանի և

¹ Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, Ե., 2003, էջ 171:

² https://www.armenianow.com/hy/features/5785/baltic_yans_a_visit_with_the; Армяне в Прибалтике. История и современность, Ноев Ковчег, М., № 22–23 (205–206) Декабрь 2012 года.

Ռուսաստանի եկեղեցական թեմի Բալթիկայի հայ համայնքների հայոց հոգևոր հովիվ Գերաշնորհ Եպս. Խոսրով Ստեփանյանի մասնակցությամբ՝ քննարկելու և իրականացնելու նախապատրաստական աշխատանքներ, ձևավորելու բալթյան համայնքների կոորդինացիոն մարմին¹: Հայոց պատմության այդ սգալից իրադարձության տարելիցը նշվել է բալթյան հայության և տեղի հասարակական-քաղաքական, մշակութային գործիչների, քաղաքացիների լայն մասնակցությամբ:

2017 թ. ապրիլին Ռիգայում մեծ շուքով անցել է միջնադարյան հայ հոգևորական, փիլիսոփա և տաղերգու Գրիգոր Նարեկացու «Մատյան նղբերգության» լատիշերեն հրատարակության շնորհանդեսը, իսկ Ռիգայի համալսարանի գրադարանում Արմենպրես լրատվական գործակալության լուսանկարչական ցուցահանդեսը՝ նվիրված հայ միջնադարյան ավելի քան երեք տասնյակ եկեղեցական ճարտարապետական կոթողներին: 2017 թ. հունիսի 6-ին Լիտվայում ՀՀ դեսպանության կազմակերպմամբ Վիլնյուսի քաղաքային սրահում տեղի է ունեցել Հայաստանի պատմական քարտեզներին (51 քարտեզ) նվիրված ցուցահանդես, որին ներկա են գտնվել Լիտվայի մշակութային նախարարը, բազմաթիվ պատգամավորներ, Լիտվայում հավատարմագրված դեսպաններ, լրագրողներ և հայ համայնքի ներկայացուցիչներ: Ցուցադրված քարտեզները ներկայացրել են Հայաստանի պատմական զարգացումն ու այդ ընթացքում երկրի սահմանների փոփոխությունը:

Լեհաստանի և Մերձբալթիկայի հայ համայնքներն այսօր կարևոր դերակատարություն ունեն այդ երկրների և ՀՀ հարաբե-

¹ <http://hayernaysor.am/> (11/02/2014).

ըություններում: Ազգային արժեքների պահպանումը, հայրենիքի հետ սերտ կապերը այս համայնքների երկարատև գոյության գրավական են:

ARMENIANS IN POLAND AND BALTIC STATES IN MODERN STAGE

(Summary)

HOVHANNES ALEKSANYAN

After the collapse of the USSR tens of thousands of Armenians arrived in Poland and Baltic states (former Soviet republics of Lithuania, Latvia, Estonia) were actively engaged especially in the trading business. There are also many renowned public, arts, cultural figures who have established themselves in the societies of these countries.

Poland's Armenian community is one of the unique manifestations of the Armenian Diaspora, with its rich history and important roles in Poland's and Baltic region's life. Armenians live in Poland for more than 650 years and the Armenian community celebrated this anniversary with great enthusiasm in 2017. In cooperation with Polish authorities and partner organizations, as well as Armenian organizations of Poland, the Armenian Embassy has organized more than two dozen events on the 650th anniversary of the privilege granting to the Armenian community.

The Polish Sejm and Senate adopted resolutions marking the 650th anniversary of the establishment of Armenian community in Poland. The Senate resolution congratulates the Armenians for the achievements and “contribution to the Polish culture and creative presence in the country's history.” In the resolution, the Polish Sejm members underscored the Armenian community's part in the history of

Poland, and paid tribute to those who gave lives for the independence of the country.

The Armenians living in the Baltic states are not traditional communities. Armenians with relatively large flows have been established in the Baltic states during the Soviet era, when mainly Armenian soldiers and specialists were sent there. It is noteworthy that after the Spitak earthquake in 1988, about 5 thousand Armenians were taken to Latvia, and some to Lithuania and Estonia. From the 1990s a number of Armenian refugees from Azerbaijan and Georgia have also been here. Small communities formed here, but there are different organizations that work hard in social and cultural spheres.

The Armenian communities of Poland and Baltic states have an important role today in the relations of these countries and Armenia. Preservation of national values and close ties with the homeland are the guarantee of long-term existence of these communities.